ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Բանավիճային դասերի կազմակերպումը պատմության դասերին ու դրա կիրառման առանձնահատկությունները
ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Շալունց Գայանե
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Վերիշենի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------2

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ: ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ----------3

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ --------7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------11

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ես երբեք ոչինչ չեմ սովորել այն մարդուց, ով համաձայն է եղել ինձ հետ»:

Դաղլի Ֆիլդ Մելոնը

Ժամանակակից կրթական համակարգում հսկայական դեր է տրվում կրթության այն ձևերին ու մեթոդներին, որոնք ուղղված են ինքնուրույն, ստեղծագործական և որոնողական գործունեության ամրապնդմանը, սովորողների ակտիվության բարձրացմանը: Ուսուցման մեթոդները ուսուցչի և աշակերտի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել աշակերտի մոտ կարողություններ և հմտություններ, ձևավորել աշակերտների աշխարհայացքը, զարգացնելու նրանց ընդունակությունները: Իրադարձությունների վերլուծության, ապագա իրավիճակների կանխատեսման և մոդելավորման այլընտրանքային մոտեցում կարող է մշակվել սովորողների կողմից բանավեճերի, քննարկումների և երկխոսության անցկացման, փորձի ձեռքբերման միջոցով:

Բանավեճը կոչված է բացահայտելու առկա տեսակետների բազմազանությունը, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի մանրամասն վերլուծությունը: Ուսումնական բանավեճը աշակերտների ակտիվ մասնակցությամբ հիմնահարցի ճիշտ լուծման ուղիների որոնումն է մտքերի, դրույթների, կարծիքների նպատակային և որոշակիորեն կարգավորված փոխանակման, քննարկման միջոցով: Բանավեճի գլխավոր նպատակը իմացական հետաքրքրության խթանումն է: Այն ուղղված է սովորողների կողմից նոր գիտելիքների ձեռքբերմանը, սեփական դիրքորոշում արտահայտելուն, կարծիքի ամրապնդմանը, այն պաշտպանելու կարողության ամրապնդմանը: Բանավեճերը թույլ են տալիս խթանելու սովորողների մոտիվացիան և քննադատական մտածողությունը: Սովորողները ձեռք են բերում հետազոտական աշխատանք կատարելու հմտություններ, անձնական դիրքորոշում ունենալու և այն հիմնավորելու, ուրիշի կարծիքը հարգելու հմտություն, հաղորդակցվելու, լեզվական հմտությունների, բանավոր խոսքի, քննարկումների, նոր կարողությունների զարգացման հմտություններ:

Բանավեճը որպես ուսուցման մեթոդ հիմնված է որոշակի խնդրի շուրջ հայացքների փոխանակության վրա, ընդ որում այդ հայացքները արտահայտում են մասնակիցների սեփական հայացքները կամ հենվում են այլոց կարծիքի վրա:

Այդ մեթոդը նպատակահարմար է օգտագործել այն դեպքում, երբ սովորողները օժտված են հասունության նշանակալից աստիճանով և ինքնուրույն մտածողությամբ, կարողանում են փաստարկել, ապացուցել և հիմնավորել իրենց տեսակետը: Լավ անցկացրած բանավեճը ունի ուսուցողական և դաստիարակչական արժեք.

սովորեցնում է խնդրի ավելի խորը ընկալմանը, սեփական դիրքորոշումը պաշտպանելու ունակությանը, այլոց կարծիքների հետ հաշվի նստելը:

Թեմայի արդիականությունը: Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է պատմության դասերին բանավեճի անգնահատելի դերի ու նշանակության, ինչպես նաև բանավիճային դասերի անցկացման վերաբերյալ մեթոդական նյութերի, աշխատանքների ու ձեռնարկների խիստ սակավաթիվ լինելով:

Աշխատանքը կարող է օգտակար լինել դպրոցում բանավիճային դասերի իրականացման ընթացքում:

Հետազոտական աշխատանքի օբյեկտն ու առարկան: Հետազոտական աշխատանքի օբյեկտը պատմության դասավանդումն է, իսկ առարկան՝ պատմության դասերին բանավեճերի կիրառման առանձնահատկությունների բացահայտումը:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքի նպատակը պատմության դասերին բանավեճ մեթոդի կիրառմամբ աշակերտների մեջ քննադատական մտածողության, հետազոտական աշխատանք կատարելու, անձնական դիրքորոշում ունենալու և այն հիմնավորելու, ուրիշի կարծիքը հարգելու հմտությունների ու կարողությունների ձևավորումն ու զարգացումն են:

Նշված նպատակի իրագործելու համար մեր առջև դրեցինք հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել բանավիճային դասերի էությունը, տեսակները:
- վերլուծել և ներկայացնել պատմության դասերին դրա կիրառման առանձնահատկությունները:
- բացահայտել ուսուցչի դերը բանավիճային դասերի իրականացման գործընթացում:
- մշակել բանավիճային դասի նմուշ-օրինակ:

Հետազոտության մեթոդ- Հետազոտության համար կիրառվել են վերացարկման, վերլուծության, համադրության և փորձի մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երկու ենթավերնագրից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԱԿՆԵՐԸ: ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Բանավեճի մեթոդը ունի հին արմատներ: Մեթոդի հնարավորությունները և արդյունավետությունը լավ են գիտակցել մեծ մտածողներն ու մանկավարժները: Այն անցել է զարգացման հսկայական ճանապարհ, հղկվել, նորացվել և այսօր դասվում է ուսուցման ակտիվ մեթոդների շարքին: Բանավեճը խթանում է մտածողությունը, առաջ է բերում ընդհանուր շահագրգռվածության մթնոլորտ, զարգացնում նախաձեռնողականությունը, սովորողների մոտ դաստիարակում ինքնուրույն մտածելու, փնտրելու, սեփական տեսակետը հստակ շարադրելու և հիմնավորելու ունակություններ, պայմաններ է ստեղծում փորձի փոխանակման և գիտելիքներով փոխադարձ հարստացման համար: Բանավեճերի մեթոդը՝ որպես բարդ, տարակարծություններ առաջ բերող հարցերին լուծում գտնելու եղանակ, որպես որոշ դրույթների պաշտպանման ու հիմնավորման և մյուսների հերքման միջոց, լայնորեն կիրառվում է ամենատարբեր ասպարեզներում, հատկապես, պատմության դասերի ժամանակ:

Պատմության ուսուցումը ևս չի կարելի կազմակերպել և անց կացնել առանց ուսուցման ինտերակտիվ մեթոդների: Մեթոդի ճիշտ ընտրությունից և նրա ճիշտ կիրառումից է կախված պատմության դասի արդյունավետությունը: Ինչպե՞ս պատմության օգնությամբ զարգացնել աշակերտի անհատականությունը, ստեղծագործական մտածողությունը, անցյալն ու ներկան վերլուծելու, սեփական եզրակացություններն անելու և ամեն ինչի վերաբերյալ սեփական տեսակետն ունենալու կարողությունը: Պատմության դասերի ժամանակ բանավեճ-քննարկումները լիովին համապատասխանում են աշակերտակենտրոն կրթության հիմնական դրույթներին:

Ի՞նչ է բանավեճը, և ինչպե՞ս ճիշտ կազմակերպել աշխատանքի նման ձևաչափը դասարանում:

«Բանավեճը (վեճ) մտավոր հաղորդակցման այնպիսի եղանակ է, որին բնորոշ է քննարկվող հարցի (հիմնախնդրի, թեմայի) շուրջ մասնակից կողմերի բացահայտ հակադրվածությունն ու պայքարը»:[1]

Բանավեճը կոնկրետ հիմնահարցերի վերաբերյալ հայացքների, կարծիքների փոխանակման, քննարկման ձևով ուսուցման ակտիվ մեթոդ է: Մեթոդը կիրառվում է, երբ նպատակ է դրվում ձևավորել նոր գիտելիքներ, ձևավորել հաղորդակցական հմտություններ, խորհելու, դրանց էության մեջ ներթափանցելու մոտիվացիան, սեփական կարծիքն ամրապնդելու և պահպանելու հարցում: Բանավեճը՝ «discussio» վեճ է, վիճաբանություն, բանավոր քննարկում, վերլուծություն վիճելի կամ հրատապ հարցի շուրջ երկու կողմերի տարբեր հիմնավորումների, փաստարկների,

[1]Հովհաննիսյան Հ. Օ., Բանավեճի տեսություն և արվեստ. Փիլիսոփայական քննախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 68:

պնդումների ու ապացույցների ձևակերպում ու մտքերի հանրային, բանավոր արտահայտում: Բանավեճը աշակերտների ակտիվ մասնակցությամբ հիմնահարցի ճիշտ լուծման ուղիների որոնումն է մտքերի, դրույթների, կարծիքների նպատակային և որոշակիորեն կարգավորված փոխանակման, քննարկման միջոց: Բանավեճն անցկացվում է 3 փուլով.

I փուլ-կողմնորոշման փուլ, մասնակիցներն ադապտացվում են միմյանց նկատմամբ, որը թույլ է տալիս ճիշտ ձևակերպել հիմնախնդիրը և նպատակը, ծանոթացնել բանավեճի անցկացման կանոնների և կանոնակարգի հետ:

II փուլ-գնահատման փուլն է, մասնակիցների ելույթները, նրանց պատասխանների, մտքերի, առաջարկությունների քննարկումը:

III փուլ- փոխհամաձայնության փուլ, որի ժամանակ վերլուծվում են ստացված արդյունքները, համաձայնեցվում են կարծիքները, դիրքորոշումները, համատեղ ձևակերպվում են որոշումները:

Բանավեճի ձևերից են՝

Սոկրատեսյան բանավեճի մեթոդը կապված է հին հունական փիլիսոփա Սոկրատեսի անվան հետ: Սոկրատեսյան մեթոդը խրախուսում է հարցերի միջոցով խնդիրների էությունը հասկանալու և ճշմարտության հասնելու մոտեցումը: Սոկրատեսյան բանավեճը զարգացնում է մտածողության որակը, հարցերը ձևակերպելու, իրենց դիրքորոշումները վերանայելու աշակերտների կարողությունները: Այս բանավեճի ժամանակ փաստական հարցեր չեն տրվում: Բանավեճի համար , որպես օրինակ, կարող է առաջարկվել,ասենք, «Ճի՞շտ էր, արդյոք, Հայաստանի առաջին Հանրապետության արևմտյան կողմնորոշումը» հարցը: Խրախուսելի է քննարկել հիմնախնդիրների վերաբերյալ հարցերը,օրինակ « Ինչպե՞ս եք գնահատում հայդուկային շարժումը», «Ի՞նչ նպատակներ էին հետապնդում խաչակրաց շարժումները»:

Բանավեճի ընթացքում աշակերտները պետք է նստեն շրջանաձև, որպեսզի միմյանց տեսնեն: Բանավեճից առաջ ուսուցիչը թեմայի շրջանակներում աշակերտներին է տրամադրում քննարկվող նյութը՝ սկզբնաղբյուրը, դասագիրքը,դասախոսությունը և այլն: Ուսուցիչը բանավեճը սկսելու համար տալիս է առաջին հարցը, որը պետք է լինի հետաքրքրաշարժ, բայց չունենա վերջնական պատասխան: Ուսուցիչը բանավեճի համար նախօրոք պետք է պատրաստի մի քանի հարց: Բանավեճը պետք է գնահատել ըստ առաջադրված նպատակի: Գնահատվում է աշակերտի նութը հասկանալու, սեփական տեսակետը հիմնավորելու, ինքնուրույն խորհրդածելու կարողությունները: Գնահատումը կատարվում է հարցաթերթիկների, ռուբրիկի միջոցով:

Բաց բանավեճ, որն ի տարբերություն Սոկրատեսյան բանավեճի մեթոդի, ապահովում է աշակերտների ղեկավար մասնակցությունը ուսուցման գործընթացին:

Դեբատը բանավեճի մրցակցային ձևն է, որը որպես ուսուցման արդյունավետ միջոց, նպաստում է աշակերտների մտահորիզոնի ընդլայնմանը, մտավոր, հետազոտական, ստեղծագործական և կազմակերպման կարողությունների զարգացմանը: Դեբատի ընթացքում երկու մրցող թիմերը քննարկվող հարցի վերաբերյալ ներկայացնում են իրենց տեսակետները, հայացքները, փաստարկները, հակափաստարկները, ապացուցում իրենց իրավացի լինելը, ցուցադրում հռետորական արվեստը: Արդյունքում հաղթում է այն թիմը, որն ըստ գնահատողների ավելի համոզիչ փաստարկներով է հանդես գալիս: Այն հարմար է կիրառել պատմության դասերի ժամանակ , քանի որ աշակերտները անկաշկանդ կարող են ներկայացնել իրենց տեսակետները, կարծիքները, թույլ է տալիս զարգացնել և հստակեցնել գիտական գիտելիքները, ընդլայնել մտահորիզոնը:

Կլոր սեղան՝ զրույց- քննարկում, որին հավասար հիմունքներով մասնակցում են սովորողների փոքր խմբեր (5 հոգի), ովքեր հետևողականորեն քննարկում են բարձրացված խնդիրները, հարցերը: Մասնակիցները կարող են լրացնել միմյանց կամ հակասել մեկը մյուսին: Բոլոր մասնակիցները պետք է կարծիք հայտնեն և ձգտեն, որ իրենց հասկանան: Բոլոր մասնակիցները հավասարազոր են, ոչ ոք իրավունք չունի թելադրել իր կամքը և կարծիքը: «Կլոր սեղանի» առանձնահատկությունն այն է, որ այն պետք է իրոք կլոր լինի, այսինքն մասնակիցների շփումը պետք է լինի «աչք աչքի» ինչը բերում է ակտիվության մեծացմանը: Մեթոդը թույլ է տալիս ամրապնդել ավելի վաղ ձեռք բերված գիտելիքները և լրացնել բաց թողնված տեղեկատվությունը: Գիտելիքների փոխանակման հետ մեկ տեղ աշակերտները սովորում են արտահայտել իրենց մտքերը, գաղափարները: Սովորում են հիմնավորել և պաշտպանել համոզմունքները:

Բանավեճի վերոհիշյալ տեսակները կիրառելի են պատմության դասերին, քանի որ դրանք միտված են խթանելու սովորողների ակտիվ մասնակցությանը քննարկումներին՝ ձևավորելու ստեղծագործական և քննադատական մտածողություն: Ուսուցիչն ու աշակերտները ազատ են ընտրության մեջ: Նրանք կարող են կիրառել ցանկացած մեթոդ՝ նպատակին հասնելու համար: Առանց կողմերի զսպվածության, փոխադարձ հարգանքի ու պարտավորվածության հնարավոր չէ արդյունավետ հաղորդակցում [2] : Ուստի անհրաժեշտ է պահպանել բանավեճի անցկացման որոշակի կանոններ.

- Ցանկացած միտք, արտահայտություն, պնդում պետք է հիմնավորվի փաստերով:

[2] Տե՛ս Հովհաննիսյան Հ. Օ., Բանավեճի տեսություն և արվեստ. Փիլիսոփայական քննախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 169:

- Յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտվելու հնարավորություն ունենա:
- Քննարկման ընթացքում ուշադիր, համբերատար, մինչև վերջ լսել հակառակորդի կարծիքը, հասկանալ և վերլուծել դիմացինի դիրքորոշումը:
- Ամեն մի դատողություն, տեսակետ պետք է ուշադրությամբ ուսումնասիրվի:
- .Լինել հանդուրժող, ազնիվ ու անկեղծ:
- Հարցերը կամ քննարկման խնդիրը պետք է ձևակերպված լինեն, հետաքրքիր և տեղին:
- Փաստերը պետք է բացատրել, ապացուցել:
- Հակառակորդի դիրքորոշումը քննադատելիս խուսափեք նրանց անձնական որակները գնահատելուց, անպայման նշեք հակառակորդի այն մտքերը, որոնք ճիշտ չեն թվում, նշեք համոզիչ թվացող ապացույցները, ապա նրբանկատորեն և ճիշտ արտահայտեք մեկնաբանություններ և հակափաստարկներ:
- Քննարկումն ավարտվում է ամփոփումով: Նշեք, թե խնդրի վերաբերյալ նախնական տեսակետները փոխվե՞լ են, ինչու՞: Ո՞ր հարցերի շուրջ է դիրքորոշումն անփոփոխ մնացել:
- Բանավեճը համարվում է կայացած, եթե մասնակիցները հասնում են առաջադրված նպատակին:
- Եթե քննարկումն անհաջող է ստացվել, ապա պետք է պարզել, թե ինչու՞

Բանավեճ-քննարկումների ժամանակ մեծ է ուսուցչի դերը:

- Նա բացատրում է ապասվելիք աշխատանքի նպատակը, հայտարարում է թեման և քննարկվող հարցերը:
- Աշակերտներին բաժանում է խմբերի, ուղղորդում ինքնուրույն աշխատանքի, տալիս է խորհուրդներ:
- Բանավեճի ժամանակ հետևում է ընթացքին, դժվարությունների ժամանակ՝ միջամտում
- Հետևում է, որ քննադատվի հնչեցված միտքը, կարծիքը, այլ ոչ թե կարծիքն արտահայտող աշակերտը:
- Բանավեճը իրականացվում է ուսուցչի ձևակերպված կանոնների համապատասխան:
- Ապահովում է հետադարձ կապ:
- Նշված կանոնները պետք է պահպանել, որպեսզի բանավեճը ծառայի իր նպատակին:

ԲԱՆԱՎԻՃԱՅԻՆ ԴԱՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԻՆ

Ժամանակակից պատմության ուսուցիչը գրեթե ամեն դասի օգտագործում է բանավեճի տարրեր, հատկապես ավագ դպրոցում: Բանավեճ –քննարկումները պատմության դասերը դարձնում են առավել ակտիվ, խոսուն, կենդանի: Ակտիվ ուսուցման մեթոդները սովորողների համար սովորելու, ճանաչողական ակտիվ գործունեություն ծավալելու ուղիներ են:

Իմ դասերի ընթացքում ես փորձում եմ հնարավորինս լայնորեն օգտագործել ուսուցման ակտիվ ձևերը՝ նպաստելով առարկայի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը, պատմական նյութի ստեղծագործական ընկալմանը և աշխարհի վերաբերյալ անկախ հայացքների ձևավորմանը: Պատմության դասի ցանկացած մասում կարելի է կազմակերպել քննարկումներ: Ուսումնասիրվող նյութին համապատասխան տալ հարցեր, համահունչ մատուցել նոր դասը: Ի տարբերություն բանավեճի ուսուցանվող թեմայի ժամանակ կազմակերպված քննարկումները նախապատրաստրաստական աշխատանքներ չեն պահանջում: Օրինակ, երբ ուսումնասիրում ենք «Վանի թագավորության անկումը» թեման սովորողներին տրվում են հետևյալ հարցերը. վերհանե՛ք «Վանի թագավորության անկման պատճառները», «Ի՞նչ ուժեր ազդեցին թագավորության անկմանը» և այլն: Սովորողները ներկայացնում են իրենց տեսակետները՝ ունեցած գիտելիքների շրջանակներում:

Սակայն այլ պահանջ է դրված ուսուցչի առաջ, երբ պլանավորում է կազմակերպել բանավեճ: Ուսուցման ժամանակակից դիդակտիկ մեթոդների շարքում առաջնակարգ տեղերից մեկը զբաղեցնում է բանավեճի մեթոդը: Այն իր էությամբ երկխոսական է՝ և՛ որպես ուսուցման կազմակերպման ձև, և՛ որպես ուսումնական նյութի բովանդակության հետ աշխատելու ձև: Դրա կիրառումը նպաստում է քննադատական մտածողության զարգացմանը՝ մատաղ սերնդին ծանոթացնելով ժողովրդավարական հասարակության մշակույթին:[3]

Բանավեճին պետք է լուրջ նախապատրաստվել: Ուսուցիչը պետք է հոգ տանի, որպեսզի աշակերտները հստակ պատկերացում ունենան բանավեճի առարկայի, ընդհանուր շրջանակների, ինչպես նաև դրա անցկացման կարգի վերաբերյալ: Բանավեճի նպատակը ոչ այնքան սովորողների՝ միմյանց տրված հարցերի ու դրանց պատասխանների պարզ հերթագայությունն է, որքան խնդրո առարկա հիմնահարցի բուն քննարկումն ու կազմակերպական ջանքերը, պայմանով, որ մասնակիցների կողմից պահպանվում են քննարկման անցկացման կանոնները: Բանավեճի թեման

[3] Տե՛ս Кларин М. В., Инновации в мировой педагогике: обучение на основе исследования, игры и дисскуссии. Анализ зарубежнего опыта, Рига, НПЦ «Эксперимент», 1995, стр.117:

կարող էլինել մեկ հիմնահարց կամ առանձին թեմա: Հարցերը պետք է կազմել այնպես, որ բխի քննարկվող թեմայից: Հարցադրումներում չպետք է լիեն ո՞վ էր ճիշտ, ո՞վ՝ սխալ ձևակերպումները: Խրախուսելի են հետևյալ հարցադրումները.

Ի՞նչ գործողություններ կարող էր անել այս կամ այն պատմական գործիչը նպատակին հասնելու համար, կամ ի՞նչ գործողություններից կարող էր զերծ մնալ, հնարավո՞ր էին այլընտրանքային գործողություններ և այլն:

Հստակ պետք է նշել բանավեճի նպատակը, ի՞նչ հմտություններ է զարգացնելու և ի՞նչ վերջնարդյունքներ են ակնկալվում:

Բանավեճին պետք է նախապատրաստվել թիմի բոլոր անդամների հետ միասին:Դասարանը բաժանում ենք բանավիճող երկու թիմի: Աշակերտներից ընտրում ենք դատավորներ, ժամապահ, ով հետևելու է ժամանակին և կանոններին, իսկ մյուս սովորողները հանդիսանում են դիտորդներ: Բանավեճի թեմային վերաբերվող լրացուցուցիչ նյութերը տրամադրվում են երկու թիմերին, դասարանի մյուս անդամներին:

Խաղը սկսելուց առաջ են թիմերը իմանում, թե՞ բանավեճի ո՞ր կողմից են հանդես գալու, սրա նպատակը պատրաստ լինել ցանկացած կողմից հանդես գալու: Օրինակ քննարկում ենք «Վարդան թե՞ Վասակ» թեման և ամբողջ դասարանը ստանում է լրացուցիչ նյութը (Ն. Ադոնցի, Եղիշեի, Ղ. Փարպեցու աշխատություններից հատվածներ), ուսումնասիրելու և փաստարկներն ու հակափաստարկները տարբեր տեսանկյուններից ներկայացնելու: Բանավեճի ժամանակ կողմերը հստակ ներկայացնում են իրենց փաստարկները, , պահպանելով սահմանված ժամանակն ու կանոնները: Ուսուցիչը անընդհատ պետք է հետևի բանավեճի ընթացքին, հնչեցրած կարծիքներին:Կողմերին լսելուց հետո դատավորները կայացնում են որոշում .

- Ո՞ր թիմի փաստարկներն են առավել հիմնավորված:
- Ո՞ր թիմը կարողացավ հիմնավոր պաշտպանել իր հերոսին:
- Ո՞ր թիմը կարողացավ հավատարիմ մնալ քննարկվող թեմային և կանոններին:
- Արդարացվե՞ց բանավեճի նպատակը:

Ուսուցիչը վերլուծում է աշակերտների թույլ տված սխալները, տալիս համապատասխան ցուցումներ: Միասինլրացնում են բացթողումները, կատարում եզրահանգումներ և գնահատում: Գնահատումը կարելի է իրականացնել յուրաքանչյուր մասնակցի համար, նախօրոք պատրաստված քարտերի, ռուբրիկների միջոցով: Այս դեպքում պետք է հետևել, որ գնահատումը լինի անաչառ: Կարելի է կիրառել նաև ինքնագնահատում:

Բանավեճային դասերի ընթացքում կարելի է կազմակերպել և քննարկել այլընտրանքային իրավիճակներ, պատմական զարգացման իրական տարբերակներ, որոնք գոյություն ունեն պատմության մեջ: Այլընտրանքային իրավիճակների վերլուծության ընթացքում սովորողները օգտագործում են հետևյալ հիշեցումները.

1.Ձևակերպեք առաջադրված յուրաքանչյուր ճանապարհի էությունը:

2.Բացահայտեք հարցերի լուծման տարբերակները:

3.Ցուցաբերեք ձեր մոտեցումը:

4.Բացահայտեք ընտրված ճանապարհի զարգացման առավելությունները և թերությունները[4]:

Ստորև կներկայացնեմ բանավեճ մեթոդի կիրառմամբ մեկ դասի օրինակ.

Դասարան -10-րդ

Առարկա - Հայոց պատմություն

Թեմա -Վարդանանց պատերազմ

Բանավեճի թեմա- Վարդան թե՞ Վասակ

Նպատակը- Զարգացնել քննադատական մտածողությունը, հետազոտելու, աղբյուրների հետ աշխատելու, հաղորդակցվելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու,լսելու, քննարկելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, որոշումներ կայացնելու կարողություններն ու հմտությունները:

Ակնկալվող արդյունքները- Ուսումնասիրի և հետազոտի զանազան վստահելի

պատմական աղբյուրներ և տեքստեր վերլուծելով դրանք

կձևավորի վերլուծական քննական մտածողություն,

խնդրահարույց հարցերի լուծման հմտություն:

Մեթոդներ- Բանավեճ

Նախապես հանձնարարել լրացուցիչ նյութ, բանավեճին պատրաստվելու համար (Ն. Ադոնցի, Եղիշեի, Ղ. Փարպեցու աշխատություններից հատվածներ) , դասարանը բաժանել բանավիճող երկու թիմերի, յուրաքանչյուր խմբում չորս աշակերտ: Մնացած աշակերտները դիտորդներ են:Ուսուցիչը հսկողի, ուղղորդողի դերում է:

[4] Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, «Տիր» հրատ., 2013, էջ 243:

Ընթացքը

1-ին թիմը Վարդան Մամիկոնյանի, իսկ 2-րդ թիմը Վասակ Սյունու պաշտպաններն են: Թիմերը ներկայացնում են իրենց դիրքորոշումները, հիմնավորում փաստերով: Ուսուցիչը հետևում է բանավեճի կանոնների պահպանմանը: Աշակերտները կարող են խրախուսական միավորներ ստանալ նաև ճշգրտող հարցերի և բանավեճը առաջ տանելու համար, իրաի լսելու, հարգելու, համեմատություններ կատարելու համար: Միևնույն ժամանակ կարող են կորցնել միավորներ բանավեճի ընթացքը խոչընդոտելու, միմյանց ընդհատելու և այլ դեպքերի համար:Բանավիճող կողմերը կատարում են եզրահանգումներ, ամրապնդում իրենց դիրքորոշումը՝ արդարացնելով թե՛ Վասակին, և թե՛ Վարդանին: Բանավեճը ավարտելուց հետո ուսուցիչը ամփոփում է թիմերի դիրքորոշումները և լսում դիտորդներին: Այնուհետև լսարանը և ուսուցիչը գնահատում են բանավեճի մասնակիցներին, նախապես կազմած գնահատման թերթիկով (ռուբրիկ): Կարելի է կազմակերպել նաև ինքնագնահատում:

Կատարել անդրադարձ և ապահովել հետադարձ կապը:

Գնահատման թերթիկ

	Սովորող 1	Սովորող 2	Սովորող 3	Սովորող 4	Սովորող 5	Սովորող 6	Սովորող 7	Սովորող 8
Համագործակցում է բոլորի հետ								
Արագ է կողմնորոշվում								
Առաջարկում է նոր մտքեր								
Որ խումբն էր առավել համոզիչ								
Ներկայացման ձև								
Փաստարկների հիմնավորվածությունը								

Մեկնաբանություն ները								

Ինքնագնահատման թերթիկ

Ինչպե՞ս մասնակցեցի քննարկումներին		
Ի՞նչ եմ սովորել		
Ինչի՞ համար կարող եմ ինձ գովել		
Որքանո՞վ օգտակար եղա թիմակիցներիս		
Ո՞ր թիմն էր արժանի հաղթանակի		

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատմությունն առավել, քան ուսումնական որևէ առարկա, ունի ինքնուրույն մտածողության կարողությունների զարգացման հնարավորություններ:

Պատմական երևույթների վերաբերյալ տարբեր գնահատականները և դրանց վերլուծությունները աշակերտների գիտակցությունը դարձնում է կաղապարներից ազատ. չկա այնպիսի տեսություն, վարկած, որ հնարավոր չլինի քննարկել, բանավիճել, վիճարկել:

Պատմության ուսուցման յուրահատկությունները ուսուցչին հնարավորություն են տալիս զարգացնելու աշակերտների ստեղծագործական, քննական մտածողությունը, հետազոտելու, վերլուծելու, բացահայտելու, թիմային աշխատելու, գնահատելու,արժևորելու կարողությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788, (մուտք՝ 17.10. 2022):
2. Հովհաննիսյան Հ. Օ., Բանավեճի տեսություն և արվեստ. Փիլիսոփայական քննախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2019:
3. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
4. Պապոյան Հ. Գ., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Երևան, «Տիր» հրատ., 2013:
5. Кларин М. В., Инновации в мировой педагогике: обучение на основе исследования, игры и дисскуссии. Анализ зарубежнего опыта, Рига, НПЦ «Эксперимент», 1995: